

Եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի գիտական խորհրդի՝

10.09.2026թ. նիստի թիվ 1 արձանագրություն

Օրակարգ

1. Ֆակուլտետի գիտխորհրդի 2026-2027 ուս.տարվա աշխատանքային պլանի հաստատում:
2. 2025-2026թ. տարում ամբիոնների կատարած աշխատանքների ընթացքի վերաբերյալ ամբիոնի վարիչների հաշվետվություն/ 2 ամբիոն:
3. Անվանական կրթաթոշակի ներկայացվող ուսանողների թեկնածությունների հաստատում:
4. Հեռակա ուսուցման ասպիրանտների և հայցորդների ատեստավորում:
5. Ե.Մխիթարյանի անգլերեն- հայերեն լեզվաբանական բառարանի և Ե.Մխիթարյանի, Ա.Աբաջյանի հայերեն- անգլերեն լեզվաբանական բառարանի տպագրության երաշխավորում:
6. Ընթացիկ հարցեր:

Գիտական խորհրդի 35 անդամներից նիստին ներկա էին 25-ը: Դեկանի պաշտոնակատար Մարինե Յաղուբյանը ներկայացրեց օրակարգի առաջին հարցը՝ Ֆակուլտետի գիտխորհրդի 2026-2027 ուստարվա աշխատանքային պլանի հաստատման հարցը: Միաձայն որոշման արդյունքում հաստատվեց 2026-2027 ուս.տարվա աշխատանքային պլանը: Այնուհետև Մ.Յաղուբյանը անցավ օրակարգի երկրորդ հարցին՝ Թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի վարիչ Ռ.Ղազարյանի հաշվետվությանը՝ հրավիրելով նրան ներկայացնելու 2025-2026 թ. ամբիոնի կատարած աշխատանքները:

Լսեցին՝ Թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի վարիչ Ռ.Ղազարյանի հաշվետվությունը:
Արտահայտվեցին՝ Թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի վարիչ Ռ.Ղազարյան նշեց, որ 2026 թվականի հունվարին Երևանի պետական համալսարանի Թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի և Սիենայի օտարերկրացիների համալսարանի Թարգմանաբանական հետազոտությունների կենտրոնի միջև կնքվել է միջհամալսարանական համագործակցության համաձայնագիր: Այն ստորագրվել է երկու համալսարանների ռեկտորների և համապատասխան ստորաբաժանումների ղեկավարների կողմից՝ կրթության, գիտահետազոտական գործունեության, ակադեմիական շարժունության և գիտական հրատարակությունների ոլորտներում երկարաժամկետ համագործակցության համար անհրաժեշտ ինստիտուցիոնալ հիմքեր ստեղծելու նպատակով:

2026 թվականի մարտին ԵՊՀ թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի վարիչ, բ.գ.թ., դոցենտ Ռուզան Ղազարյանը և նույն ամբիոնի բ.գ.թ., դոցենտ Իշխան Դադյանը աշխատանքային այցեր են կատարել Սիենայի օտարերկրացիների, Հռոմի Սապիենցա և Տրինետի համալսարաններ: Այցերն իրականացվել են Scopus միջազգային գիտատեղեկատվական շտեմարանում ինդեքսավորված *Translation Studies: Theory and Practice* գիտական պարբերականի աջակցության ծրագրի շրջանակում: Դրանց հիմնական նպատակներն էին պարբերականի միջազգային ճանաչելիության և գիտական ազդեցության ընդլայնումը, օտարերկրյա հեղինակների ու գրախոսների ներգրավումը, ինչպես նաև նշված համալսարանների հետ գիտակրթական և հետազոտական համագործակցության նոր ուղղությունների ձևավորումը:

Սիենայի օտարերկրացիների համալսարանում Թարգմանաբանական հետազոտությունների կենտրոնի տնօրեն Ջուլիա Մարկուչիի նախաձեռնությամբ կազմակերպվել է հատուկ հանդիպում կենտրոնի դասախոսների և ասպիրանտների հետ: Հանդիպման ընթացքում մանրամասն ներկայացվել

են *Translation Studies: Theory and Practice* պարբերականի գիտական ուղղվածությունը, միջազգային կարգավիճակը, հրատարակչական քաղաքականությունն ու զարգացման հեռանկարները: Քննարկվել են պարբերականի աշխատանքներում իտալացի և եվրոպացի հետազոտողների՝ որպես հեղինակների և գրախոսների ներգրավման, ինչպես նաև համատեղ գիտական նախաձեռնությունների իրականացման հնարավորությունները:

Հանդիպման շրջանակում Ռուզան Ղազարյանը և Իշխան Դադյանը դասախոսություններ են կարդացել Հայաստանում թարգմանության տեսության, պրակտիկայի և թարգմանաբանական հետազոտությունների արդի խնդիրների վերաբերյալ: Քննարկվել են նաև համատեղ կրթական և գիտահետազոտական մի շարք ծրագրեր, որոնց իրականացման ուղղությամբ ներկայում աշխատանքներ են տարվում: Համագործակցության շարունակականությունն ապահովելու նպատակով նախատեսվում է Ջուլիա Մարկուչիի այցը ԵՊՀ թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոն, որի ընթացքում նա դասախոսություններ կկարդա ամբիոնի ուսանողների և դասախոսների համար:

Հռոմի Սապիենցա համալսարանում տեղի են ունեցել մի շարք հանդիպումներ համալսարանի պրոֆեսորադասախոսական և վարչական անձնակազմի ներկայացուցիչների հետ: Մասնավորապես, քննարկումներ են անցկացվել Եվրոպական, ամերիկյան և միջմշակութային ուսումնասիրությունների ինստիտուտի դեկան, դոկտոր Սիմոնե Չելանիի, նույն ինստիտուտի դոցենտ, *Ricerche slavistiche. Nuova serie* միջազգային գիտական պարբերականի գլխավոր խմբագիր Մոնիկա Վոժնյակի, պրոֆեսոր Լուիջի Մարինելլիի, տեսալսողական թարգմանության մասնագետ, դոցենտ Մարգերիտա Դորեի, անգլիալեզու թարգմանագիտության մասնագետ Մերի Ուորդլի, համեմատական գրականության և գերմանագիտության մասնագետ Ֆեդերիկո Իտալիանոյի և այլ գործընկերների հետ:

Հանդիպումների ընթացքում մանրամասն ներկայացվել է *Translation Studies: Theory and Practice* պարբերականը, և առաջարկվել են այդ ուղղությամբ համագործակցության տարբեր ձևաչափեր՝ միջազգային հեղինակների ու գրախոսների շրջանակն ընդլայնելու նպատակով: Այս համատեքստում հատուկ ընդգծվել է, որ պարբերականը պաշտոնապես ներառվել է Իտալիայի համալսարանների և գիտահետազոտական ինստիտուտների գնահատման ազգային գործակալության՝ ANVUR-ի (*Agenzia Nazionale di Valutazione del Sistema Universitario e della Ricerca*) կողմից ճանաչված գիտական պարբերականների ցանկում: Այդ հանգամանքը նոր հնարավորություններ է ստեղծում իտալացի գիտնականների հետ հրատարակչական համագործակցության խորացման և պարբերականում բարձրաժեք գիտական աշխատանքների տպագրության համար:

Սապիենցա համալսարանում քննարկվել են նաև ինստիտուցիոնալ համագործակցության ընդլայնման հեռանկարները: Մասնավորապես, «Էրազմուս+» ծրագրերի համակարգող Մոնիկա Վոժնյակի հետ ձեռք է բերվել նախնական համաձայնություն երկու համալսարանների միջև «Էրազմուս+» համագործակցության համաձայնագրի կնքման ուղղությամբ աշխատանքներ սկսելու վերաբերյալ: Դրա իրականացումը կարող է նպաստել դասախոսների և ուսանողների ակադեմիական շարժունությանը, համատեղ դասընթացների ու գիտահետազոտական ծրագրերի մշակմանը և երկու համալսարանների միջև մասնագիտական կապերի ամրապնդմանը:

Սապիենցա համալսարանի գործընկերները նաև առաջարկել են համատեղ կազմակերպել միջազգային գիտաժողով: Նախատեսվում է, որ այն ոչ միայն հնարավորություն կընձեռի քննարկելու թարգմանագիտության արդի հիմնախնդիրները, այլև կծառայի որպես նոր մասնագիտական կապերի ձևավորման, հետագա համագործակցային ծրագրերի նախաձեռնման և *Translation Studies: Theory and Practice* պարբերականի միջազգային տեսանելիության բարձրացման հարթակ: Ներկայում

համապատասխան քայլեր են ձեռնարկվում գիտաժողովի հայեցակարգի և կազմակերպական ձևաչափի մշակման ուղղությամբ:

Պարբերականի զարգացմանն առնչվող հարցերը քննարկվել են նաև Տրիեստի համալսարանի պրոֆեսորադասախոսական և վարչական անձնակազմի ներկայացուցիչների հետ:

Տրիեստի համալսարանի թարգմանագիտական ստորաբաժանման գործընկերներն իրենց հերթին առաջարկել են գործնական քայլեր ձեռնարկել համատեղ գիտահետազոտական ծրագրեր նախաձեռնելու ուղղությամբ: Նախատեսվում է, որ այդ ծրագրերի արդյունքները հոդվածների ձևաչափով կարող են հրապարակվել ինչպես *Translation Studies: Theory and Practice* պարբերականում, այնպես էլ միջազգային այլ հեղինակավոր գիտական հանդեսներում: Այս նախաձեռնությունը կարող է նպաստել համատեղ հետազոտությունների զարգացմանը, գիտական արդյունքների միջազգայնացմանը և ներգրավված հաստատությունների միջև կայուն մասնագիտական ցանցի ձևավորմանը:

2026 թվականի մայիսին ԵՂՀ թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնը հյուրընկալել է Քենթի պետական համալսարանի անվանի թարգմանաբան, դոկտոր Բրայն Ջեյմս Բեյրին: Այցի ընթացքում նա դասախոսություններ է կարդացել ամբիոնի ուսանողների և դասախոսների համար՝ անդրադառնալով թարգմանագիտության արդի տեսական և մեթոդաբանական խնդիրներին:

Բրայն Բեյրը նաև *Translation Studies: Theory and Practice* պարբերականի երրորդ հատուկ համարի հրավիրյալ խմբագիրն է: Համարի հրատարակումը նախատեսվում է 2026 թվականի սեպտեմբերի կեսերին: Ներկայումս մշակման փուլում է նաև ԵՂՀ-ի և Քենթի պետական համալսարանի թարգմանաբանական բաժինների միջև համագործակցության համաձայնագիրը, որը միտված է կրթական ու գիտահետազոտական կապերի ամրապնդմանը, դասախոսների և ուսանողների ակադեմիական փոխանակումների խթանմանը, համատեղ գիտական ծրագրերի իրականացմանը և հրատարակչական համագործակցության ընդլայնմանը:

2026 թվականի հունիսին ամբիոնը «Էրազմուս+» դասախոսական շարժունության ծրագրի շրջանակում հյուրընկալել է նաև CIELS Բոլոնիա համալսարանի և Տրիեստի համալսարանի գործընկեր Ֆիլիպո Բագոկիին, որը դասախոսություններ է կարդացել ամբիոնի ուսանողների համար:

Այսպիսով, 2026 թվականի ընթացքում իրականացված նախաձեռնությունները նշանակալիորեն նպաստել են ԵՂՀ թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի միջազգային համագործակցության ընդլայնմանը և գիտական տեսանկյունից բարձրացմանը: Դրանց արդյունքում ձևավորվել են միջհամալսարանական երկարաժամկետ համագործակցության նոր հեռանկարներ, որոնք ներառում են ակադեմիական շարժունությունը, հրավիրյալ դասախոսությունները, համատեղ գիտաժողովների կազմակերպումը, գիտահետազոտական ծրագրերի իրականացումը, գիտական հրապարակումների պատրաստումը և միջազգային պարբերականների շրջանակում հրատարակչական համագործակցությունը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Ռ.Ղազարյանի հաշվետվությունը գնահատել դրական: Որոշումն ընդունվեց միաձայն:

ԼՍԵՑԻՆ՝ Անգլերենի թիվ 1 ամբիոնի վարիչ Մ.Ապրեսյանի հաշվետվությունը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Անգլերենի թիվ 1 ամբիոնի վարիչ Մ.Ապրեսյանը նշեց, որ անգլերենի թիվ 1 ամբիոնը տարիներ շարունակ իրականացնում է անգլերենի ուսուցումը ոչ լեզվական ֆակուլտետներում, իսկ 2001թ.-ից նորովի վերամշակելով իր ծրագրերը՝ կիրառում է դասավանդման նոր մեթոդաբանություն՝ ESP (անգլերենը հատուկ նպատակների համար), որը զգալիորեն նպաստում է դասավանդման արդյունավետությանը: Նույն տարում ամբիոնում հիմնվել է FLSP (օտար լեզուն մասնագիտական

նպատակների համար) պարբերականը (գլխավոր խմբագիր՝ Մ. Ապրեսյան), որտեղ լուսաբանվում են FLSP դասավանդման միջազգային և հայրենական փորձն ու ձեռքբերումները:

Հաշվետու տարվա առաջին կիսամյակում տպագրության է հանձնվել <<Օտար լեզուն մասնագիտական նպատակների համար>> պարբերականի FLSP Vol.25(2025) հեթական համարը, իսկ երկրորդ կիսամյակում FLSP Vol.26(2026) համարը (պարբերականը ներառված է ԲՈԿ-ի ցանկում):

1. Անգլերենի թիվ 1 ամբիոնը 2010թ.-ից որդեգրել է միջազգային թեստավորման ուղին և հանդիսանալով TOEFL միջազգային թեստավորման պաշտոնական կենտրոն՝ յուրաքանչյուր տարի հաջողությամբ իրականացնում է նախապատրաստական դասընթացներ և թեստավորում ԵՊՀ և ՀՀ պետական մի շարք բուհերի ասպիրանտուրայի հավակնորդների, ինչպես նաև օտարերկրյա քաղաքացիների համար: 2025-2026 ուստարում ևս ամբիոնի կողմից իրականացվել են TOEFL (ibt) միջազգային թեստավորում և նախապատրաստական դասընթացներ վերոնշյալ շահագրգիռ անձանց համար, որոնց մեծամասնությունը հաղթահարել է պահանջվող շեմը:
2. Հաշվետու ուստարում ամբիոնի կողմից դասավանդվող ֆակուլտետների համար կազմվել են բակալավրիատի և մագիստրատուրայի նորացված ծրագրեր:
3. 2025-2026 ուստարում ամբիոնի մի շարք դասախոսներ՝ ամբիոնի վարիչի գլխավորությամբ, ակտիվորեն մասնակցել են մի շարք միջազգային գիտաժողովների և մասնագիտական վերապատրաստումների.
- «Live-streaming of the ECML-EC Colloquium on Regional and minority languages in secondary education» վերապատրաստման դասընթաց անգլերենի մասնագետների համար (դեկտեմբերի 26, 2025թ.):
- Բրիտանական Խորհրդի կողմից կազմակերպված՝ «Teaching for Success Conference 2026» («Դասավանդում հանուն հաջողության») վերտառությամբ երկօրյա համաժողով (փետրվարի 28 - մարտի 1, 2026թ.)□
- «Webinar for Teachers - Cambridge University Press and Assessment», վերապատրաստման դասընթաց անգլերենի մասնագետների համար (մարտի 10-12, 2026թ.):
- «Effective strategies for teaching and assessing writing - Cambridge University Press and Assessment», վերապատրաստման դասընթաց անգլերենի մասնագետների համար (մարտի 24-26, 2026թ.):
- «ELTOC Chapter 12 - Webinar, Oxford University Press» վերապատրաստման դասընթաց անգլերենի մասնագետների համար (մարտի 26, 2026թ.):
- Երևանի պետական համալսարանի կողմից կազմակերպված՝ ԵՊՀ շրջանավարտների ֆորում (մայիսի 16, 2026թ.):
4. 2025-2026 ուստարում ամբիոնի դասախոսներից մասնակցել են IELTS Teacher Training դասընթացին՝ ստանալով EBSCO Information Services Access and Use of EBSCO Երեսույթների մասնակցության վկայական և որակավորվել, որպես IELTS Instructor (հոկտեմբերի 2, 2025թ.):
5. 2025-2026 ուստարում ամբիոնի դասախոսներից մասնակցել են Erasmus+ միջազգային շարժունության ծրագրին, որի շրջանակում իրականացվել է դասավանդում և

վերապատրաստում Զաարլանդի համալսարանում ընթացող AI in Education աշխատաժողովին (հունիսի 8-12, 2026թ.)□

6. Ամբիոնի դասախոսները հեղինակ են մի շարք դասագրքերի, ուսումնական ձեռնարկների և գիտական հոդվածների, որոնք նախատեսված են տարբեր բնագավառներում մասնագիտացող ապագա գիտնականներին մասնագիտական անգլերենի հուսալի գիտելիքներ փախանցելու և ՀՀ գիտական պոտենցիալը միջազգային ասպարեզում ներկայացնելու համար:

Դասագրքեր և ձեռնարկներ

- Վերահրատարակման փուլում է «English 4 Law» իրավաբանական անգլերենի դասագիրքը՝ նախատեսված իրավագիտության ֆակուլտետի ուսանողների համար, հեղինակներ՝ Ապրեսյան Մ., Ասիկյան Ս., Այվազյան Ա., Մնացականյան Լ., Մկրտչյան Ք., Ոսկանյան Ա.:
- Անգլերենի Հանրակրթական դպրոցների 9-րդ, 11-րդ և 12-րդ դասարանի դասագրքեր / ուսուցչի ձեռնարկներ «Զանգակ» հրատարակչություն, 2025, հեղինակ՝ Գրիգորյան Լ.:

Հոդվածներ

Հանձնված է հրատարակության՝

- Մ. Ապրեսյան, Լ. Սարգսյան, Ա. Այվազյան, Ն. Այվազյան, Enhancing environmental literacy through AI-assisted CLIL in higher education, Web of Conferences /Scopus Indexing/ 7th International Conference on Environmental Design and Health (ICED2026):

Հրատարակված՝

- Մ. Ապրեսյան, Մ. Կարապետյան, (2026), Designing an "English for Civil Workers" Curriculum Based on ESP Approach, Օտար լեզուները մասնագիտական նպատակների համար /FLSP/, Vol. 26, ԵՊՀ հրատ.:
- Գրիգորյան Լ., Գևորգյան Ռ., (2026), Teaching English for Specific Professional Contexts: Contemporary Approaches in FLSP Instruction, Օտար լեզուները մասնագիտական նպատակների համար /FLSP/, Vol. 26, ԵՊՀ հրատ.:
- Մնացականյան Լ., Մկրտչյան Ք., (2026), Linguistic Distortions in Legal Documents: A Functional Analysis of Legally Consequential Errors, Օտար լեզուները մասնագիտական նպատակների համար /FLSP/, Vol. 26, ԵՊՀ հրատ.:
- Հայրապետյան Ն., (2026), The Problem Of Effective Learning Of Speech Patterns In The Course Of Advanced English Learning, Օտար լեզուները մասնագիտական նպատակների համար /FLSP/, Vol. 26, ԵՊՀ հրատ.:
- Կարապետյան Ռ., (2026), Expression of Refutation in Scientific Discourse: A CrossLinguistic Syntactic Study in English, Russian and Armenian, "Bulletin of Yerevan University. Philology", Vol. 17 No. 2(50), ԵՊՀ հրատ., Երևան:

- Ոսկանյան Ա., (2026), Legal English: Lexical Competence and Curriculum Design, Armenian Folia Anglistika, Vol. SI-2, YSU Press:
- Այվազյան Ա., (2025), Bridging Language and Law: The Importance of Legal English for ESL Students, Օտար լեզուները մասնագիտական նպատակների համար /FLSP/, Vol. 25, ԵՊՀ հրատ.:
- Այվազյան Ն., (2025) Artificial Intelligence as an Innovative Tool in ESP Courses, Օտար լեզուները մասնագիտական նպատակների համար /FLSP/, Vol. 25, ԵՊՀ հրատ.:
- Семенова М.Ю., Маргарян Е.Г. (2026), Развитие двуязычного ментального лексикона через трансязычные стратегии: роль ключевых слов-триггеров в спонтанной речи студентов- билингвов // Филология: научные исследования. № 5. С. 58-74. DOI: 10.7256/2454- 0749.2026.5.79876 EDN: ELUDRQ

ԼՄԵՑԻՆ՝ Եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի՝ անվանական կրթաթոշակի ներկայացվող ուսանողների թեկնածությունների հաստատման հարցը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Միաձայն քվեարկության արդյունքում որոշվեց ընթացիկ ուսումնական տարվա **առաջին** կիսամյակում հետևյալ ուսանողներին առաջադրել անվանական կրթաթոշակի:

1. Հ. Աճառյանի անվան անվանական կրթաթոշակի համար ներկայացվել է «Լեզվաբանություն» մասնագիտության «Միջմշակութային հաղորդակցություն (անգլերեն)» բակալավրի կրթական ծրագրի 3-րդ կուրսի ուսանող **Հասմիկ Գևորգի Ռոստոմյան:**
2. Ֆ. Վերֆելի անվան անվանական կրթաթոշակի համար ներկայացվել է «Լեզվաբանություն» մասնագիտության «Անգլերեն, իտալերեն և հաղորդակցություն» բակալավրի կրթական ծրագրի 3-րդ կուրսի ուսանող **Մարիա Արմեն Դեմիրճյան:**
3. Վ. Սարոյանի անվան անվանական կրթաթոշակի համար ներկայացվել է «Լեզվաբանություն» մասնագիտության «Անգլերեն, իսպաներեն և հաղորդակցություն» բակալավրի կրթական ծրագրի 4-րդ կուրսի ուսանող **Ջուլիետա Վաղարշակրի Մարանջյան**

Միաձայն որոշման արդյունքում որոշեցին.

- Բավարար համարելով կատարված աշխատանքը՝ ատեստավորել հայցորդ Սիլվա Մարտինի Սուքիասյանին (Ժ.01.07. «Արտասահմանյան գրականություն» մասնագիտություն):
- Դրական գնահատելով կատարված աշխատանքը՝ ատեստավորել Անգլիական բանասիրության ամբիոնի ասպիրանտ **Արփինե Սարգսի Առաքելյանին** (Ժ.02.07. Ռոմանագերմանական լեզուներ մասնագիտություն):
- Դրական գնահատելով կատարված աշխատանքը՝ ատեստավորել Անգլիական բանասիրության ամբիոնի հայցորդ **Աննա Արտեմի Թարոյանին** (Ժ.02.07. Ռոմանագերմանական լեզուներ մասնագիտություն):
- Դրական գնահատելով կատարված աշխատանքը՝ ատեստավորել Անգլիական բանասիրության ամբիոնի հայցորդ **Անի Պետրոսյանին** (Ժ.02.07. Ռոմանագերմանական լեզուներ մասնագիտություն):

- Դրական գնահատելով կատարված աշխատանքը՝ ատեստավորել Անգլիական բանասիրության ամբիոնի հայցորդ **Մարինե Էվոյանին** (Ժ.02.07. Ռոմանագերմանական լեզուներ մասնագիտություն):
- Դրական գնահատելով կատարված աշխատանքը՝ ատեստավորել Անգլիական բանասիրության ամբիոնի հայցորդ **Ռիմա Վիկտորի Բադեյանին** (Ժ.02.07. Ռոմանագերմանական լեզուներ մասնագիտություն):
- Դրական գնահատելով կատարված աշխատանքը՝ ատեստավորել Անգլիական բանասիրության ամբիոնի հայցորդ **Արինա Պարոնյանին** (Ժ.02.07. Ռոմանագերմանական լեզուներ մասնագիտություն):
- Հաստատել Անգլիական բանասիրության ամբիոնի ասպիրանտ Արմինե Ղազարյանի՝ «Կանանց և տղամարդկանց խոսքային առանձնահատկությունները սոցիալական մեղիա դիսկուրսում» թեմայով ատենախոսության թեման:
- Դրական գնահատելով կատարված աշխատանքը՝ ատեստավորել Անգլիական բանասիրության ամբիոնի հայցորդ **Լուսինե Հովիկի Ջանինյանին** (Ժ.02.07. Ռոմանագերմանական լեզուներ մասնագիտությամբ):
- Ե. Ս. Մխիթարյանի՝ «Անգլերեն–հայերեն լեզվաբանական բառարան» աշխատության գիտամեթոդական բարձր մակարդակը, նորարարական բնույթը, լեզվաբանական և բառարանագրական նշանակալի արժեքը, ինչպես նաև դրա գործնական կիրառելիությունը գիտակրթական ոլորտում՝ երաշխավորել աշխատությունը տպագրության:
- Երաշխավորել Մարիամ Վարդանի Կարապետյանի թեկնածությունը որպես անգլերենի թիվ 1 ամբիոնի վարիչ, բ.գ.թ., պրոֆեսոր Մարգարիտա Հրանտի Ապրեսյանի օգնական:

Եվրոպական լեզուների և հաղորդակցության
ֆակուլտետի դեկանի պ/կ և գիտական խորհրդի
նախագահ, բ.գ.թ., դոցենտ՝

Մ.Հ.Յաղուբյան

Գիտական խորհրդի քարտուղար,
բ.գ.թ., դոցենտ՝

Մ. Գ. Դալայան